



## **Հայաստանի ԶԱՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ՎԱՍՏԱՅԻՆ ԵՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԷԾԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԳ ՄԱՐՄԻՆ**

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ  
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատձեն՝ + 374 10 53 56 61  
Էլ.փոստ՝ [meo@ypc.am](mailto:meo@ypc.am)

### **ՈՒՂԵՑՈՒՅՑ**

#### **Հայաստանի ԶԼՄ-ների համար՝**

#### **մշակված «Դելֆին ընդդեմ Էստոնիայի» գործով**

#### **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի**

#### **նախադեպային որոշման հիման վրա**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) Մեծ պալատը 2015թ. հունիսի 16-ին կայացրեց *Դելֆին ընդդեմ Էստոնիայի* գործով վերջնական վճիռ, որում արտահայտված իրավական որոշ դիրքորոշումներ կարող են էապես փոփոխել լրատվամիջոցների պատասխանատվության շրջանակները համացանցում: Դելֆի-ի գործի փաստերը հետևյալն են.

Դելֆի ընկերությունն առցանց լրատվամիջոց է, որը մասնաճյուղեր ունի մի քանի երկրներում: Նրա էջերում հրապարակվում է տարբեր լեզուներով օրը մինչև 330 հոդված, որոնց վերաբերյալ ընթերցողները թողնում են օրը մոտ տասը հազար մեկնաբանություն (քոմենթ): Բոլոր մեկնաբանությունները ներբեռնվում են ավտոմատ եղանակով, ընկերությունը դրանք չի խմբագրում և մոդերացիայի չի ենթարկում, քոմենթների մեծ մասն անանուն է (կամ կեղծանունով): Յուրաքանչյուր ընթերցող կարող է ցանկացած քոմենթի տակ նշում անել տվյալ քոմենթում վիրավորական, ծաղրական կամ ասելության խոսքի առկայության մասին, որի պարագայում լրատվամիջոցն արագ հեռացնում է տվյալ քոմենթը:

2006թ. հունվարին լրատվամիջոցը հրապարակում է մի առևտրային ընկերության գործունեության մասին հոդված, որը հակասական արձագանքներ է ստանում: Շատ ընթերցողներ հոդվածի տակ թողնում են ընկերության հասցեին վիրավորական մեկնաբանություններ ու սպառնալիքներ, ասելության խոսք ու բռնության կոչեր: Լրատվամիջոցը այդ մեկնաբանությունները չի հեռացնում իր կայքից: Լրատվամիջոցը համարում է, որ քանի դեռ ընկերությունը գրավոր չի ծանուցել քոմենթները հեռացնելու մասին, ինքը պարտավոր չէ դրանք հեռացնել սեփական նախաձեռնությամբ: Ընկերությունից գրավոր ծանուցումը ստացվում է վեց շաբաթ անց: Այն ստանալուն պես լրատվամիջոցը քոմենթները հեռացնում է իր կայքից:

Եվրոպական դատարանը որոշեց, որ քումենթները հեռացնելու պարտականությունը լրատվամիջոցի համար ծագել էր ոչ թե ծանուցումը ստանալու պահից, այլ այն պահից, երբ ընկերությունը տեղյակ էր դարձել դրանց գոյության մասին: Տվյալ դեպքում, փաստերը ցույց էին տալիս, որ լրատվամիջոցը տեղյակ էր դարձել նախքան ծանուցումը ստանալը, քանի որ այդ քումենթներում առերևույթ վիրավորական արտահայտությունները և նույնիսկ ատելության խոսքն այն աստիճանի բացահայտ էին, որ լրատվամիջոցը չէր կարող իմացած չլինել, որ իր վերահսկման և կառավարման տիրույթում կան դրանք: Սակայն լրատվամիջոցը չէր գործել բարեխղճորեն:

ՄԻԵԴ-ն իր մոտեցումը հիմնավորեց՝ հաշվի առնելով համացանցի առանձնահատկությունը և դրա տարբերությունը լրատվություն տարածելու այլ միջոցներից (տպագիր մամուլ, ռադիո, հեռուստատեսություն և այլն): Այս առումով ՄԻԵԴ-ը արտահայտեց հետևյալ դիրքորոշումները.

- Համացանցում ազատ արտահայտվելու իրավունքի իրականացման համար խիստ կարևոր է անանուն մնալու և իրենց ինքնությունը չբացահայտելու հնարավորություն տալ օգտատերերին: Այդուհանդերձ, համացանցի զարգացումը, նաև հավանականությունը (իսկ որոշ դեպքերում նաև վտանգը), որ համացանցում մեկ անգամ հրապարակայնորեն տարածված խոսքը կարող է ընդմիջտ մնալ որպես այդպիսին և անդադար տարածվել, պահանջում է զգոնություն ցուցաբերել,
- Համացանցում տեղեկության տարածվելու դյուրինությունը, նաև՝ այդ տիրույթում մեծ ծավալով տեղեկությունների առկայությունը դժվարացնում են համացանցում վիրավորական կամ զրպարտող բնույթի հայտարարությունները հայտնաբերելն ու հեռացնելը: Սա շատ դժվար լուծելի խնդիր է առցանց լրատվամիջոցների օպերատորների համար: Առավել մեծ դժվարության առջև են կազնում վիրավորանքի կամ զրպարտության գոհ դարձած քաղաքացիները, ովքեր մեծ մասամբ չունեն համացանցի մոնիտորինգի բավարար ռեսուրսներ:

Հաշվի առնելով այս ամենը, ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը դիմում է Հայաստանի այն լրատվական կայքերին, որոնք հրապարակումների մեկնաբանությունների (քումենթների) հնարավորություն են տալիս ընթերցողներին.

1. նկատի ունենալ, որ խմբագրություններն այլ հեղինակների մեկնաբանությունների համար պատասխանատվությունից ազատվում են միայն այն դեպքում, եթե կարող են հիմնավորել, որ տեղյակ չեն եղել և օբյեկտիվորեն չէին կարող տեղյակ լինել նման գրառումների առկայության մասին,
2. թեպետ ՄԻԵԴ-ի որոշումը մեկնաբանությունների մոդերացիա չի պարտադրում, այսուհանդերձ, խորհուրդ ենք տալիս հնարավորության դեպքում մոդերացնել դրանց հրապարակումը՝ հետեւելով, որ մեկնաբանությունների սյունակներում չհայտնվեն ակնհայտ ատելության խոսք, բռնություն եւ օրենքով արգելված այլ գործողություններ քարոզող, ակնհայտ վիրավորանք պարունակող գրառումներ,

3. Եթե, այնուամենայնիվ, հայտնվում են նման գրառումներ, ապա հայտնաբերելու դեպքում ավելի նպատակահարմար է դրանք որքան հնարավոր է արագ հեռացնել, քան ձևականորեն սպասել և ծանուցում ստանալուց հետո միայն հեռացնել,
4. Եթե լրատվամիջոցը մեկնաբանություններում չի նկատել ակնհայտ ատելության խոսք, բռնության կոչ կամ ակնհայտ վիրավորանք պարունակող գրությունները, սակայն անձը, որի հասցեին եղել են դրանք, այդ մասին ծանուցել է խմբագրությանը, ապա խորհուրդ ենք տալիս ծանուցումից հետո ողջամիտ ժամկետում հեռացնել նման մեկնաբանությունները:

*Ընդունվել է ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2015 թվականի հուլիսի 23-ի նիստում:*